ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ, ք.Երևան, Թբիլիսյան խճ. 3/9, հեռ. /010/ 20-10-93

ՈԴԴ 8.1 Ե- 8942/13

« 27 » դեկտեմբերի 2013թ.

«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի

գրասենյակ» հասարակական կազմակերպությանը

/հասցեն՝ ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 59/

Սույն գրությանը կից ուղարկվում է թիվ ՎԴ 10973/05/12 վարչական գործով վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին Հայաստանի Հանրապետության վարչական վերաքննիչ դատարանի 27.12.2013թ. որոշումը:

Առդիր՝ դատարանի որոշումը «1» թերթից:

ԴԱՏԱՎՈՐ՝ Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆ

Վարչական գործ թիվ ՎԴ/10973/05/13

ՈՐՈՇՈՒՄ
ՎԵՐԱՔՆՆԻՉ ԲՈՂՈՔԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

« 27 » դեկտեմբերի 2013թ. ք. Երևան

Հայաստանի Հանրապետության վարչական վերաքննիչ դատարանը (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան), քննարկելով Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 27.11.2013 թվականի որոշման դեմ «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության կողմից ներկայացրած վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու հարցը,

ՊԱՐԶԵՑ

«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպությունը հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ Հայաստանի Հանրապետության Նախագահի՝ ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի 2013 թվականի սեպտեմբերի 3-ի Մաքսային միությանը միանալուն ուղղված գործողությունները /անգործությունը/ ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին:

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի /դատավոր՝ Կ.Ավետիսյան/ 2013 թվականի նոյեմբերի 27-ի որոշմամբ հայցադիմումի ընդունումը մերժվել է:

Չհամաձայնվելով նշված որոշմանը՝ «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպությունը 2013թ. դեկտեմբերի 17-ի փոստային առաքմամբ ներկայացրել է վերաքննիչ բողոք:

Թիվ ՎԴ/10973/05/13 վարչական գործը Վերաքննիչ դատարան է մուտքագրվել 25.12.2013թ. և նույն օրը հանձնվել է դատավոր Ա.Առաքելյանին:

Վերաքննիչ դատարանը գտնում է, որ վերաքննիչ բողոքը ենթակա է վարույթ ընդունման, քանի որ համապատասխանում է Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 117.4-րդ հոդվածի պահանջներին և բացակայում են նույն օրենսգրքի 117.6-րդ հոդվածով նախատեսված՝ վերաքննիչ բողոքը վերադարձնելու հիմքերը:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 117.5-րդ հոդվածով՝ Վերաքննիչ դատարանը,

ՈՐՈՇԵՑ

Ըստ հայցի «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության ընդդեմ Հայաստանի Հանրապետության Նախագահի՝ ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի 2013 թվականի սեպտեմբերի 3-ի Մաքսային միությանը միանալուն ուղղված գործողությունները /անգործությունը/ ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին, թիվ ՎԴ/10973/05/13 վարչական գործով Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 27.11.2013 թվականի որոշման դեմ «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության կողմից ներկայացված վերաքննիչ բողոքն ընդունել վարույթ:

ԴԱՏԱՎՈՐ՝ Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ